ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՄ ԵՎ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Հայոց ազատագրական շարժումները, ինչպես հասարակական-քաղաքական կյանքի ամեն մի արտահայտություն, իրենց արտացոլումն են ստացել հայ գրականության մեջ և դրամատուրգիայում: Ազատագրական պայքարի պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավում Զեյթունի ինքնապաշտպանության սխրանքներով լի հերոսական պաշտպանությունը, որին նվիրվել են ոչ միայն ականատեսների վկայություններ, գիտական ուսումնասիրություններ, գեղարվեստական գործեր, այլև դրամատիկական ստեղծագործություններ:

1895-1896 թվականներին Սասունի, Վանի, Տիգրանակերտի, Զեյթունի և այլ վայրերի կոտորածների ժամանակ ծնունդ առած ազատագրական շարժումները ընդդեմ թուրքական բռնապետության հայահալած քաղաքականության, հավաստի նյութ են ծառայել բեմական արվեստի միջոցով պայքարի համար: Այդ դեպքերի թարմ տպավորության տակ գրվել ու բեմադրվել են տասնյակ պիեսներ, որոնց հեղինակները, բեմադրողները, դերակատարները և հանդիսատեսների մեծ մասը եղել են այդ իրադարձությունների մասնակիցները կամ ականատեսները:

Թատերական գրականության և արվեստի միջոցներով թուրքերի բարբարոսությունների դեմ պայքարի հերոսական դրվագները ժողովրդի մեջ վառ պահելու առաջին օրինակները տվել են Արևմտյան Հայաստանի գավառներից գաղթած և Բուլղարիայի քաղաքներում ապաստանած հայերը: Նրանցից մեկը՝ Տիգրան Գալեմճյանը, որը եղել է Պոլսի «Արևելյան» թատրոնի երբեմնի հուշարարը, դարձել դերասան, ապա՝ դրամատուրգ, առաջիններից մեկն է անդրադարձել 1895-1896 թթ. կոտորածների պատմությունը բեմական նյութ դարձնելու հարցին: Նա գրել ու բեմադրել է մի

շարք պիեսներ, որոնցից մի քանիսը վերաբերում են Զեյթունի և շրջակա վայրերի հայ բնակչության հերոսական դիմադրությանն ու ինքնապաշտպանությանը: Հենց նույն 1896-ին նա գրել ու Վառնայում բեմադրել է «Սասնո հերոսներ», «Զեյթունի ապստամբությունը», իսկ այնուհետև՝ «Վասպուրականի հերոսները» պիեսները:

Գալեմճյանի պիեսները թերևս չեն պահպանվել, բայց դրանց հաճախակի ներկայացումները վկայում են, որ այդ պիեսները, համահնչուն լինելով փախստականների հոգեբանությանը, դրական դեր են կատարել հարազատ վայրերի կարոտը, հիշողությունը, ավանդությունները, մասնավորապես՝ լեզուն անմոռաց ու անաղարտ պահելու գործում: Նրա «Վասպուրականի հերոսները» (այլ անվամբ՝ «Տավրոսի հերոսները կամ Հաղթանակ Զեյթունցվոց») հինգ գործողությամբ հերոսապատումը առաջին անգամ բեմադրվել է 1901-ի ապրիլի 21-ին Վառնայի Սենթրալ թատրոնում՝ տեղի հայ դերասանական խմբի կողմից: Պիեսի նպատակասլացության և առաջացրած հետաքրքրության օգտին է խոսում նրա երկրորդ բեմադրությունը 1902-ի փետրվարի 15-ին: 1904-ին «Վասպուրականի հերոսները» բեմադրվել է Սոֆիայի «Վարիետե» թատերախմբի կողմից, ու գլխավոր դերերով հանդես են եկել հետագայում բուլղարահայ թատրոնի նշանավոր դերասան Թորգոմ Մեչիկյանը՝ Տեր Կոմիտասի և շեքսպիրյան թատրոնի դերասանի համբավի արժանացած Կարապետ Գալֆայանը՝ Պետոյի դերերում:

1895 թվականին Կիլիկիայում տեղի ունեցած ինքնապաշտպանության դեպքերի՝ Զեյթունի և շրջակա վայրերի հերոսական պաշտպանությանն է նվիրված հայ հասարակական-քաղաքական կյանքի պատմության մեջ հայտնի գործիչ Աղասիի (Կարապետ Թուր-Սարգիսյան, 1871-1941) «Զեյթունի հերոսները» հինգ գործողությամբ դյուցազներգությունը: Պիեսը գրվել է 1900-ին Կահիրեում և տեղում էլ տպագրվել 1906-ին: Հեղինակն իր պիեսը ձոնել է տաշօղլուգցի, Մավենքի, Արեգունի, Միխայլենքի, զեյթունցի, Ֆոնուսցի, հաճընցի, մարաշցի, այնթափցի 21 անձնվեր գործիչների, Զեյթունի պաշտպանության 125 հերոս նահատակների անմոռաց հիշատակին:

Աղասիի «Զեյթունի հերոսները» պիեսում ընդգրկված են տասից ավելի գործող անձ և նրանց ձայնակցող խմբերգը: Պիեսը

գրված է ազատ չափածոյով, ավելի շատ հռետորական բնույթ ունի, քան գործողություն է պարունակում: Թերևս այն բեմադրված չլինի, քանի որ նրա մասին ժամանակի մամուլում հետք չի մնացել: Պիեսի հերոսներն են Նազար իշխանը, Թրքասեր իշխան Հարոն, որին դավաճանության համար սպանում է նրա եղբոր դուստր Երանիկը, թշնամու դեմ պայքարում Երանիկի հետ զոհված նրա սիրած տղան՝ քաջասիրտ Ավետիքը: Դրական գծերով են օժտված անվախ ու քաջ ավազակապետ Ճելլատը և ավազակապետուհի Կատարը, որը ծպտված անցնում է թուրքական կողմը՝ լուրեր հավաքելու: Հայրենասիրական գործին նպաստում են Օվանես վարդապետը, տեր Սարգիս քահանան: Գործողությունները ծավալվում են Նազար իշխանի ամառանոցում, Պերիտ լեռան քարայրերում, Ֆոնուսի շրջակայքում, Ս. Աստվածածին վանքում:

Զեյթունի մասին հայերեն և ֆրանսերեն մի շարք գրքերի հեղինակ Աղասիի այս պիեսում նկարագրված են պատմական կոնկրետ իրադարձություններ, պատմական վայրեր, իրական անձնավորություններ. հիշատակված են Ֆոնուսցի խենթ Բարթողը՝ Բարդուղիմեոս վարդապետ Թագակչյանը, հարեմի հարճ դառնալուց անձնուրաց մահը գերադասած և իրեն ժայռից ցած գցած Ֆոնուսցի տիկին Տնտեսյանը, անգլիացի գնդապետ, պատվիրակ Ջերմայստը, որը Քյամիլ և Սայիդ փաշաների հետ հավաքել է զեյթունցիների զենքերը՝ խոստանալով բարենորոգումներ անել Հայաստանի համար, և. ուրիշներ:

«Զեյթունի հերոսները» պիեսը, գրված լինելով նյութին հրաշալիորեն տիրապետող ականատեսի, պայքարի մասնակցի ամենահավաստի տվյալներով, պատմական դեմքերի և դեպքերի հարազատ նկարագրությամբ, այնպիսի զորեղ ապացույցներ է պարունակում ցեղասպանության դեմ պայքարի թեմայով պիեսների շարքում, որի հետ չի կարելի հաշվի չնստել:

Զեյթունի հերոսական պաշտպանության թեման հարազատորեն կապված է նաև զորավար Անդրանիկի անվան հետ: Նրա անունը հիշատակված է դրամատուրգ Վալադ Վալադյանի (Մկրտիչ Վանեցյան, 1883-1974) «Ազատության ճանապարհին կամ Անդրանիկ փաշայի մահը» հինգ գործողությամբ ազգային անտիպ դրամայում: Այս պիեսը դերասան Բարսեղ Աբովյանը 1930-ին բեմադրել ու Անդրանիկի դերն էլ կատարել է Բեյրութում, Հալեպում, Ալեք-

սանդրիեռում և այլ վայրերում տված ներկայացումների ժամանակ: «Ազատության ճանապարհին» պիեսում Անդրանիկը մահանում է՝ Սասուն, Խանասոր, Զեյթուն, Հայաստան ասելով:

Թուրքական բարբարոսությունների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի պատմությունն իր գեղարվեստական արտացոլումն է ստացել նաև հնչակյան կուսակցության գործիչ, դրամատուրգ Սեդրակ Շահենի (Սեդրակ Շահինյան, 1887-1975) ստեղծագործություններում: Նրա գրչին են պատկանում «Տանջվածները», «Թալեաթի անկումը», «Հայկական հարսանիք», «Բսան կախաղաններ» և ուրիշ գործեր, որոնցում հայրենասիրական բարձր գաղափարով ու նվիրական պայքարի հարուստ դրվագներով են պատկերված մոտ անցյալի քաղաքական ու ազատագրական շարժումների իրական պատկերները:

Սփյուռքահայ թատրոնի պատմության մեջ նշանակալից տեղ է գրավել նաև Ս. Շահենի «Զեյթուն» չորս գործողությամբ դրաման, որը տպագրվել է 1920-ին Նյու Յորքում: Պիեսի նյութը թուրքական բռնապետության դեմ հնչակյան գործիչների մղած պայքարի պատմությունն է, որի կազմակերպիչն ու կենտրոնական դեմքը արդեն մեզ հայանի Աղասին է: Այս պիեսը ներկայացվել է 1933-ի հունվարի 22-ին Պրովիդենսի «Հնչակ» դերասանական խմբի կողմից՝ Խաչիկ Մուրատճյանի բեմադրությամբ: Աղասու կերպարը մարմնավորել է Մարտիրոս Պետրոսյանը, որի դերակատարումը դարձել է ներկայացման ոգին: Իրական-պատմական մյուս դեմքերի դերերում հանդես են եկել Օննիկ Մկրտչյանը՝ Ապահի, Եփրեմը՝ Մլեհի, Խ. Կետիկյանը՝ Խաչեր քահանայի, Հ. Հյուլունյանը՝ Սուսամի, Վ. Դարբինյանը՝ Սառայի, Ա. Թղթիկիկյանը՝ Բարդուղիմեոս վարդապետի, Կարո Պետիկյանը՝ Ֆռնուսի քահանայի, Ս. Ստեփանյանը՝ թուրք հրամանատար Էտհեմ փաշայի, Պ. Թոթոյանը՝ Իտալիայի դեսպան մըսթր Վիտոյի, Վ. Մուրատճյանը՝ Ալի Հյուսեին պեկի դերերում և ուրիշներ: Պիեսի և բեմադրության գաղափարական եզրակացությունը եղել է մեկը՝ Զեյթունն ազատ է, ազատ պետք է լինի և Հայաստանը:

Սեդրակ Շահենի «Զեյթուն» («Զեյթունի հերոսական ապստամբությունը») բեմ է հանվել նաև լիբանանահայ թատրոնում: Այն ներկայացվել է Բեյրութի Սահակյան վարժարանի սրահում՝ «Պանդուխտ» թատերախմբի կողմից: Բեմադրությանը մասնակցել են

բեյրութահայ թատրոնի լավագույն ուժերը, այդ թվում՝ դերասաններ և բեմադրիչներ Պողոս Մենտիլյանը և Գ. Թյուբյունճյանը: Ներկայացման ազդագրի վրա գրվել է՝ «Հայրենակիցնե՛ր, եթե կուզեք պահ մը հայոց ազգային պայքարի մարտնչումներով ապրիլ, անպայման հաճեցեք ներկա գտնվիլ»:

Զեյթունի և շրջակա վայրերի հերոսական պաշտպանության դրվագների պատմությանը նվիրված ավելի շատ գործեր են գրվել ու խաղացվել թատրոնում, քան հիշատակվեց այստեղ: Ավելացնենք միայն, որ Զեյթունը իր հերոսների հետ տվել է նաև թատերական գործիչներ, որոնք մնայուն հետք են թողել հայ գրականության և մշակույթի պատմության մեջ: Մեծ եղեռնի զոհ, գրող, խմբագիր, դրամատուրգ Սմբատ Բյուրատի (Տեր-Ղազարյան, 1862-1915) «Քաջն Վարդան Մամիկոնյան կամ Ավարայրի արծիվը» հինգ գործողությամբ պիեսը 1900-ից մինչև 1960-ական թվականները գրեթե անընդմեջ բեմադրվել է եգիպտահայ թատրոնում, տեղ գտել ամերիկահայ և ավստրալիահայ թատերախմբերի խաղացանկում: Պիեսն իր գաղափարախոսական նպատակասլացությամբ դաստիարակել է մի քանի սերունդներ:

Զեյթունյան թեման տեղ է գտել նաև բանաստեղծ Սիմոն Ֆելեկյանի (1831-1904) գրական ժառանգության մեջ: Արձագանքելով 1895-1896-ին Սասունում և Զեյթունում թուրքերի կատարած ջարդերի հետևանքով տեղական հայ ազգաբնակչության հերոսական դիմադրությանը և կազմակերպված պաշտպանությանը՝ Ֆելեկյանն այդ հերոսամարտերի թեմայով գրել է «Սասուն և Զեյթուն» չափածո ողբերգությունը և 1900-ին տպագրել Կահիրեում:

Զեյթունի և նրա խիզախ բնակչության հերոսական պաշտպանությունը համահայկական կյանքի պատմության նվիրական էջերից մեկն է: Այն, իր արտացոլումն ստանալով հայ գրականության (ինչպես և դրամատուրգիայում) մեջ և թատրոնում, աջակցել է նրա հերոսական պատմության հավերժացմանը, քաջալերել ամեն մի հայի ազգային ինքնապաշտպանության գաղափարի գիտակցությունն արթուն պահելու նվիրական գործում: